

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ - 2022թ.

Հարցաթերթ


(տևողությունը՝ 150 րոպե)

(գնահատման քայլը՝ 0.25 միավոր)

10-րդ դասարան

1. Լրացնել գծապատկերի ազատ վանդակները:

1.5 միավոր



2. Հյուսիսային կիսագնդի ամենաընդարձակ լեռնաշխարհն է, իսկ հարավային կիսագնդի ամենաբարձր գագաթն է

0.5 միավոր

3. Աֆրիկյան երկիր, որի տարածքի մեծ մասը գտնվում է ցամաքի, իսկ մայրաքաղաքը՝ կղզու վրա: Նշել մայրաքաղաքը (0.25 միավոր), պետությունը (0.25 միավոր) և կղզին (0.5 միավոր):

1 միավոր

4. Դուրս գրել ավելորդ հասկացությունները (պատասխանը հիմնավորել). 1 միավոր

ազգություն, ուրբանացում, ազլոմերացիա, էթնոս, լեզվախումբ, միապետություն, գրաբեն, ռասսա, սելվաս, անկլավ:

5. Խնդիր. Տվյալ վայրում տեղումների տարեկան քանակը 900 մմ է, խոնավացման գործակիցը՝ 1,5: Որոշել գոլորշունակությունը:

1 միավոր

6. Ընդգծել մասնագիտական սխալները:

1.5 միավոր

Իրանը բազմազգ երկիր է: Պարսիկները պատկանում են հնդեվրոպական լեզվաընտանիքի կելտական լեզվախմբին: Երկրի հյուսիսում բարեխառն, իսկ հարավում մերձհասարակածային կլիմայական գոտիներն են: Իրանի տարածքի նշանավոր լեռնաշղթաներն են՝ Էլբուրսը և Արևմտյան Գաթերը: Գետերից նշանավորը

Եփրատն է, գոգավորությունից՝ Սպահանի, իսկ անապատներից՝ Դեշտե Լուտը և Դեյր Էզ-Ջորը:

7. Լրացնել բաց թողած բառերը:

1 միավոր

Հյուսիսային Ամերիկայում տարածքի մեծությամբ երրորդ պետությունը է, որի մայրաքաղաքն է : Այդ երկիրը սահմանակից է գետով-ին:

8. Արևադարձը, բևեռային շրջագիծը, Երևանի աշխարհագրական լայնության և 68° գուգահեռականները դասավորել ըստ երկարությունների աճող հաջորդականության:

1 միավոր

9. Բացատրել նկարները.

3 միավոր



ա) բացատրել ռելիեֆի ի՞նչ ձևեր և մարդածին ի՞նչ գործոնների արդյունքներ են, 1 միավոր

բ) բացատրել դրանցից յուրաքանչյուրը:

2 միավոր

10. Գծել արտեզյան ջրերի կտրվածքի սխեմատիկ պատկերը:

1 միավոր

11. Կազմել փոխկապակցված 4 զույգ:

1 միավոր

Բայկալ, Նիագարա, Ախուրյան, Լադոգա, Էրի, Նևա, Անգարա, Արփի:

12. Նշված արտահայտությունները աշխարհագրական ո՞ր օբյեկտներին են համապատասխանում: **2 միավոր**

- | | |
|-----------------------------------|--|
| ա. մարդկության նախահոր կամուրջը – | գ. երկու Սպիտակ ծով, ո՞րն է երկրորդը – |
| բ. աստծո դուռ քաղաքը – | է. առանց ծխնելույզների քաղաքը – |
| գ. արցունքի դուռը – | ը. գետ, որի անունը կրում է մեր աշխարհահռչակ կոմպոզիտորներից մեկը – |
| դ. բաղնիքների քաղաքը – | |
| ե. կրիաների կղզին – | |

13. Կողմնացույցի հյուսիսային ուղղությունը ցույց տվող սլաքը կարո՞ղ է ուղղված լինել դեպի հարավ: Մեկնաբանել: **1 միավոր**

14. Ճշմարիտ է արդյոք, եթե ոչ, ապա նշել ճիշտ պատասխանը: **1 միավոր**

- ա. Երկրագնդի ամենահարավային գործող հրաբուխը Ապոն է,
 բ. Մորավիան Ռումինիայի պատմական շրջաններից է:

15. Ե՞րբ և որտե՞ղ է ցանկացած առարկայի ստվերը համընկնում տեղական միջօրեականի հետ: **0,5 միավոր**

16. Դիտակետից ե՞րբ է Երկիրը Արեգակին մոտ կեսօրին և ե՞րբ՝ երեկոյան: Մեկնաբանել: **1 միավոր**

17. Նշել **2 միավոր**

Պետություն	Մայրաքաղաք	Ամենամեծ քաղաք
Մարոկկո		
Բելիզ		
Մալթա		
Շրի Լանկա		
Նոր Զելանդիա		
Սյանմա		

Հանձնաժողովի նախագահ՝

Վ.Վ. Գրիգորյան